ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

01.06.2016թ. N30-Լ
Ինկորպորացիա առ 20.05.2026թ. N 81-Լ
(շարադրվել է նոր խմբագրությամբ 01.04.2020թ.N 49-Լ)

ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԾԱՆՐ, ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՆՉԵՂՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ԱՅԼ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԸ ԶԵԿՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(լրաց. 20.05.2026թ. N 81-Լ)

Առանձնապես ծանր, անչափահասների նկատմամբ կատարված և հասարակական հնչեղություն ունեցող հանցագործությունների դեպքերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահին և Կոմիտեի նախագահի՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին զեկուցելու միասնական ընթացակարգ սահմանելու, անհրաժեշտ կազմակերպական, վերահսկողական և այլ գործառույթներ իրականացնելու նպատակով, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝
(լրաց. 20.05.2026թ. N 81-Լ)

Հանձնարարում եմ՝

1. Կոմիտեի մինչդատական վարույթ իրականացնող ստորաբաժանումների պետերին՝ Կոմիտեի նախագահին և նրա համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին կապի միջոցով անձամբ անհապաղ զեկուցել (այդ թվում՝ ոչ աշխատանքային օրերին և ժամերին). (փոփ. 20.12.2024թ. N 252-Լ, 20.05.2026թ. N 81-Լ)

1) առանձնապես ծանր հանցագործությունների, հասարակական հնչեղություն ունեցող և զանգվածային լրատվամիջոցների կողմից քննարկվող հանցագործությունների դեպքերի վերաբերյալ.
2) սպանության, սպանության փորձի, ավազակության դեպքերի վերաբերյալ.
2.1) անչափահասների նկատմամբ կատարված առանձնապես ծանր, ծանր, ինչպես նաև հասարակական հնչեղություն ունեցող հանցագործությունների դեպքերի վերաբերյալ. (ենթակետը լրաց. 20.05.2026թ. N 81-Լ)
3) այն հանցագործությունների դեպքերի վերաբերյալ, որոնք կատարվել են.
ա. հրազենի կամ պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի գործադրմամբ,
բ. Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների (Հայաստանի Հանրապետության փոխվարչապետներ, պատգամավորներ, Սահմանադրական դատարանի դատավորներ, Բարձրագույն դատական խորհրդի անդամներ, Վճռաբեկ, վերաքննիչ, առաջին ատյանի դատարանների դատավորներ, նախարարներ և նրանց տեղակալներ, Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավար, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար, վարչապետի աշխատակազմի ղեկավար, Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ վարչապետին ենթակա մարմինների ղեկավարներ, նրանց տեղակալներ, մարզպետներ, նրանց տեղակալներ, Երևանի քաղաքապետ և նրա տեղակալներ, Հաշվեքննիչ պալատի նախագահ և անդամներ, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ, նրա տեղակալներ, խորհրդի անդամներ, Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության, Հանրային ծառայությունները կարգավորող, Կոռուպցիայի կանխարգելման, Կենտրոնական ընտրական հանձնաժողովների նախագահներ, անդամներ, Վիճակագրական կոմիտեի ղեկավար և վիճակագրության պետական խորհրդի անդամներ) կամ նրանց մերձավոր ազգականների կողմից կամ նրանց նկատմամբ, (փոփ. 20.12.2024թ. N 252-Լ, 20.05.2026թ. N 81-Լ)
գ. դատախազների, Կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց, հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների, ազգային անվտանգության, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության, հարկային, մաքսային մարմինների, հարկադիր կատարումն ապահովող, քրեակատարողական և պրոբացիայի ծառայությունների բարձրագույն և գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող անձանց կամ նրանց մերձավոր ազգականների կողմից կամ նրանց նկատմամբ, (խմբ. 20.12.2024թ. N 252-Լ)
դ. Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների կամ նրանց մերձավոր ազգականների կողմից կամ նրանց նկատմամբ,
ե. Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական առաքելությամբ գտնվող անձանց կողմից կամ նրանց նկատմամբ,

զ. Հայաստանի Հանրապետությունում գրանցված կուսակցությունների կամ հասարակական կազմակերպությունների ղեկավարների կողմից կամ նրանց նկատմամբ,
է.զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից կամ նրանց նկատմամբ,
ը.Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից կամ նրանց նկատմամբ: (պարբ. լրաց. 20.12.2024թ. N 252-Լ)

2. Սույն հանձնարարականի 1-ին կետով նախատեսված կարգով զեկուցումից հետո 24 ժամվա ընթացքում այդ մասին գրավոր հաղորդում ներկայացնել Կոմիտեի նախագահին և նրա՝ համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին կամ Կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետին (լրաց. 20.05.2026թ. N 81-Լ):
Գրավոր հաղորդման մեջ մանրամասն նկարագրել հանցագործության դեպքի հանգամանքները, քրեական վարույթ նախաձեռնված լինելու դեպքում նշել քրեական վարույթ նախաձեռնելու օրը, ամիսը, տարեթիվը, քրեական վարույթի համարը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդվածը, պատճառված վնասի չափը, տվյալներ տուժողների, հանցանք կատարած անձանց և կայացված որոշումների վերաբերյալ: (խմբ. 20.12.2024թ. N 252-Լ)

3. 12 ժամվա ընթացքում լրացուցիչ հաղորդում ներկայացնել Կոմիտեի նախագահին (Կոմիտեի նախագահի համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանումների դեպքում), նրա համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին կամ Կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետին, եթե հանցանք կատարած անձի ինքնությունը պարզվել է սույն հանձնարարականի 2-րդ կետով նախատեսված հաղորդումը ներկայացնելուց հետո՝ նշելով ձերբակալման կամ կիրառված խափանման միջոցի մասին:
Սույն հանձնարարականի 1-ին կետի 2.1-ին ենթակետով նախատեսված հանցագործությունների դեպքերով քննվող քրեական վարույթներով ձերբակալելու, ձերբակալումից ազատելու կամ խափանման միջոց կիրառելու կամ փոխելու, քրեական հետապնդում հարուցելու, չհարուցելու կամ դադարեցնելու միջնորդություն ներկայացնելու դեպքում նախօրոք զեկուցել Կոմիտեի նախագահին (Կոմիտեի նախագահի համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանումների դեպքում), Կոմիտեի նախագահի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին կամ Կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետին, իսկ նրանց կողմից՝ Կոմիտեի նախագահին:
Դատախազի նախաձեռնությամբ քրեական հետապնդումը հարուցելու կամ չհարուցելու կամ դադարեցնելու դեպքում զեկուցել Կոմիտեի նախագահին (Կոմիտեի նախագահի համակարգման ոլորտում գտնվող ստորաբաժանումների դեպքում), Կոմիտեի նախագահի համապատասխան ոլորտը համակարգող տեղակալին կամ Կոմիտեի տարածքային

քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետին, իսկ նրանց կողմից՝ Կոմիտեի նախագահին: (փոփ. լրաց. 20.05.2026թ. N 81-Լ)

3.1. Կոմիտեի նախագահի տեղակալներին և Կոմիտեի կենտրոնական մարմնի գլխավոր վարչությունների պետերին՝
սույն հանձնարարականի 1-ին կետի 2.1-ին ենթակետով նախատեսված հանցագործությունների դեպքերով քննվող քրեական վարույթները վերցնել հսկողության և ընթացքի վերաբերյալ պարբերաբար զեկուցել Կոմիտեի նախագահին: (կետը. լրաց. 20.05.2026թ. N 81-Լ)

4. Կոմիտեի նախագահի տեղակալներին՝
1) վերահսկել սույն հանձնարարականի պահանջների կատարումը.
2) սույն հանձնարարականի պահանջների խախտում հայտնաբերելու դեպքում Կոմիտեի նախագահին զեկուցագրով հայտնել այդ մասին Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով նախնական ուսումնասիրություն նշանակելու համար:

5. Սույն հանձնարարականն ուղարկել Կոմիտեի նախագահի տեղակալներին, Կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների պետերին:

Ա. Գ. Հովսեփյան